

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաւրանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տաճան և մէկ և տասն ամսական՝ 9 ռ., ինն և ութ ամսական՝ 8 ռ., եօթ ամսական՝ 7 ռ., վեց ամսական՝ 6 ռ., հինգ ամսական՝ 5 ռ., չորս ամսական՝ 4 ռ., երեք ամսական՝ 3 ռ., երկու ամսական՝ 2 ռ., մի ամսական 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղարայան և Բարոնակայա փողոցն. անկիւն):
Ուրիշ քաղաքներէն գրելու է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախաձեռնութեան ոգին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խաչատուր Աբովեան. Ներկայացում հոգեկան հիւանդների համար. Նամակ Թեմիքիան-Նուրայից. Նամակ Խանքենդից. Նամակ Նոր-Նախիջևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Անգլիայից.

ՆԱԽԱՁԵՆՈՒԹԵԱՆ ՈՂԻՆ

Նորերս մի յօդուածի մէջ մենք յայտնեցինք այն միտքը, որ մասնաւոր և հասարակական նախաձեռնութեան ոգին մեռած է մեր երկրի մէջ և տոկուն կուլտուրական աշխատանքի հասկացողութիւնը գրեթէ բոլորովին չէ մասնացացած: Թէ մասնաւոր նախաձեռնութիւնը և մասնաւոր տոկուն կուլտուրական աշխատանքը ինչ ահագին դեր են խաղում մի ազգի զարգացման և առաջդիմութեան գործի մէջ, դրա կենդանի ապացոյցը՝ հիւսիսային երկրներն են.—Դանիան, Նորվեգիան և Նիւէյնան: Այդ երկրներն քաղաքակրթութեան զլխաւոր ոյժը հիմնված է մասնաւոր և հասարակական նախաձեռնութեան վրա, որին կառավարութիւնը զործելու լայն ապարդէզ է տալիս:

Մի աշխատութեան մէջ, որ հրատա-

րակվել է նորերս, հեղինակ Հանդէր Բաղմաթիւ փաստեր է առաջ բերում, որոնք ցոյց են տալիս, թէ հիւսիսային այդ երեք երկրներում բոլոր նշանաւոր և աչքի ընկնող բարեփոխութիւնների ու կատարելագործութիւնների նախաձեռնութիւնը պատկանում է հասարակութեանը կամ մասնաւոր անհատներին, և ոչ կառավարութեան: Վաճառական եակօքսը 1876 թ. հիմնել է Դանիայում մի գրական ֆոնդ, որ ամենահարուստն է աշխարհում, որովհետեւ տարեկան մօտ 500 հազար ռուբլի եկամուտ է բերում և այդ գումարը գործադրվում է գրողների օգնելու և զանազան գիտական ու գրականական ձեռնարկութիւններին նպաստելու համար: Դալմաս ինժեները հիմնել է մի ընկերութիւն, որն նպատակն է աւազի դէմ կռուել նաւագատ Իւտլանդիայում և շնորհիւ նրա եռանդի, 25 տարեկան ընթացքում, նա ուղղել է 10,000 զետեատին հող, անց է կացրել 48 մղոն ջրանցքներ և 44800 զետեատին տեղ անտառ է դրել, այնպէս որ նախկին լայնալիցաւ անտառը մնացել է միայն 80 մղոն տեղ: Դրոնստիլդ անուով մի անձն հիմնել է Դանիայում ժողովրդական համալսարաններ: Դանիական մարմնամարզութեան ամբողջ սիստեման, ձեռագործի նշանաւոր զարգացումը, բանաւորական և աշխատանքական անեքի հաս-

տատութիւնը, արեւոյդութեան դէմ մաքառելը—այդ բոլորը մասնաւոր նախաձեռնութեան արդիւնք է:

Հիմնելով ժողովրդական համալսարաններ, լսարաններ, ընթերցարաններ, կազմելով գրական ֆոնդեր, հաստատելով բանաւորական և աշխատութեան տներ, արհեստանոցներ, մասնաւոր նախաձեռնողները երբեք չեն դիմել կառավարութեան օգնութեան, երբեք չեն հայցել նրա աջակցութիւնը, ինչպէս այդ տեղի է ունենում մեզանում, ամեն գործում, ամեն բայում: Եւ զանիական, նորվեգիական կառավարութիւններն էլ միայն այն ժամանակ են ինքնաբերաբար օգնութեան ձեռք մեկնել այդ հիմնարկութիւններին, երբ նրանք արդէն ցոյց են տուել իրանց օգնականները երկրին և ցանկալի է եղել աւելի լայնացնել նրանց գործունէութիւնը:

Մասնաւոր և հասարակական նախաձեռնութեան ոգին, տոկուն կուլտուրական աշխատանքը,—ահա հիմնադրաբար, որոնց վրա պէտք է յիշել մեր երկրի բարգաւաճումը և որոնցից կախված է նրա ապագայ առաջադիմութեան մեծ մասը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՅԱՏԱՐԱՐ ԱՐՈՎԵԱՆ

Ի՞նչ էր այն գրական ժառանգութիւնը, որ թողեց մեզ Աբովեանը. ինչի մէջն էր կայանում «Վէրք Հայաստանի» գրուածքի նշանակութիւնը. ինչ գրական կամ հասարակական նորութիւն էր դարձրելու կազմող այդ երկասիրութիւնը:

«Վէրք Հայաստանին» իսկապէս մի նորութիւն էր հայերի համար: Մինչև այդ ժամանակ հայերին տառերով տպւած գիրքը, եթէ զուտ կրօնական մի գիրք կամ ուսուցման մի ձեռնարկ չէր, նա դարձեալ պատում էր բերկրական աշխարհի հերոսների շուրջը, կամ շատ-շատ վերաբերում էր պատմական մի օրէն և ինչպէս: Այսինքն և Աբովեանը և Շուշանիկ և դրանց նման անձնաւորութիւններ միանգամայն համապատասխանում էին գրական այն ուղղութեան, որ գոյութիւն ուներ

այն ժամանակվայ դպրոցի մէջ: Եւ արդարեւ, այդպիսի թիւմաներով դրուածքներ լայն տեսանք է «Վէրք Հայաստանին» հրատարակվելուց առաջ և թէ դեռ մի փոքր ժամանակ էլ յետոյ: Բայց «Վէրք Հայաստանին» իր բովանդակութեան նիւթը վերցրեց ժամանակակից իրական կեանքից, նկարագրելով այն ժողովուրդը, որ ապրում է ներկայումս իր օրական ցաւ ու հոգով, իր վիշտերով և տենչանքներով: Մեռած, այլ ևս անվերադառնալի հերոսների տեղը ապարդէզ բերվեցին կենդանի մարդիկ, որոնք թէ պէտք է կազմէին նորագոյն զարգացման նպատակակետը և թէ տալին այդ զարգացման համար աշխատանքների դուրսը:

Առաջ նկարագրվում էին եղեմական դրախտը, Պալեստինը, Փարաւոնների եգիպտոսը, հայոց, յունաց, պարսից և վրաց արքունիքները. իսկ «Վէրք Հայաստանին» դրեց ընթերցող հասարակութեան առաջ մեր ներկայ երկրը, Քա-նաքեռը, Փամբակը, Արարատը, Մասիսը: Արհեստական, չինձու պատկերների փոխարէն նա ներկայացրեց մեր երկրի բնութիւնը ուժեղ և բնորոշ գծերով: Ոչ միայն այնպիսի ամբողջացում և ինքնուրոյն նկարներ, ինչպէս է Արմավանի «Ջանգուտ», այլ և մի քանի խոշոր ստուերադձած գիւղական շրջանի, լեռնական կեանքի և զանազան տեղերի պատկերները առ միշտ որոշեցին այն շրջակայքը, որ պէտք է նիւթ տար գրականութեան:

Ընտրելով նիւթ ներկայ ժողովուրդը իր ապրած երկրում նա վերջ դրեց զուտ կրօնական կամ հին հայրենասիրական հոգեմղումներին: Ժողովուրդը իր տանջանքների և տենչանքների աշխարհով գնում էր հասարակութեան առաջ մի շարք խորհրդածութիւններ, մի շարք հարցեր: Պէտք էր բարձրացնել ժողովրդին իր ներկայ ծանր վիճակից, պէտք էր նրա մէջ տարածել կրթութիւնը՝ սկսած զրազկուութիւնից, պէտք էր նրան ոգևորել անձնուէր և համերաշխ գործունէութեան համար: Այդ խնդիրներն են, որ կազմում են հայրենասէրի ողբը, այն ժամանակվայ քաղաքացիական վիշտը: «Վէրք Հայաստանին» հեղինակը առաջ չէր կար ինտելիգենտ հասարակութիւն, որին նա դիմէր և որի հետ խօսէր: Այդ պատճառով նա իր բոլոր իդէներով դիմում է կամ մանուկներին և աշա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿԱՆ ԳԼԻՒԹՅՈՒՆ

Լօսիդօն, մայիսի 31-ին

Ժողովուրդը սիրում էր Վրադստոնին, որովհետեւ նա սիրում էր ժողովրդին: Թէ որչափ մեծ էր Վրադստոնի կրօնատար անդլիայիները համար, թէ ինչպէս էին նրան յարգում, սիրում,—դժուար է գաղափար կազմել լրագիրների յօդուածներից: Հարկաւոր էր այն ջերմ, խանդավառ համակրութեան, այն խորին հիացման վեհ արտայայտման, որին մենք տխուր ակնատեսն էինք այս տարւ օրվայ ընթացքում:

Դեռ նա հիւանդ էր միայն, երբ հասարակութիւնը անհանգիստ ուշ ու միտքը Հովաքիւնի հիւանդի անկողնու շուրջն էր: Ոչ միայն ազատամիտ մամուլն էր, որ ամեն օր, իսկ վերջերք երկու անգամ տպւած էր բերկրանքներ, այլ առանց բացառութեան բոլոր թերթերը: Տեղի ունեցող միտմաները թէ՛ պահպանողական, բացվում էին հիւանդին բարեմաղթութեան հեռագիր ուղղվում միաձայն որոշումով. շատ տեղեր՝ պարանադէս, տօնախմբութիւն, ճաշկերպիչ և այլն յետաձգվում էին: Ի՞նչ էր լինէր, ուրեմն, երբ լրագիրները մայիսի 19-ին լայն տեսան սև շրջանակով պատած՝ «Հերոսներից հերոս» մահը գուժելով ժողովրդին: Ամերիկո-սլաւոնական պատերազմ, Տրանսկապ, Դերբի, Չեմբլերի ճառը և այլն, ամեն ինչ երկրորդական կարգի անցաւ մոռացվեց:

Դուրս էր գալիս փողոց, գնում էր ճաշարան, ամենուրեք բոլորի խօսակցութեան առարկան Վրադստոնն է: Հասարակական և մասնաւոր մեծ շնորհիւներն իրա զորաւիրները կիսով չափ ծաղած են՝ ի նշան սգի. խանութների պատուհաններում հանգուցեալի լուսանկարը, մեծադիր պատկերները ի ցոյց էին դրված: Պարլամենտը հաւաքվեց, մահվան լուրը պաշտօնապէս յայտարարվեց և անմիջապէս ցրվեց: Հետեւեալ օրվայ նիստը նուիրված էր Վրադստոնի յիշատակին: Այդ օրվանից սկսած Վրադստոնի դարձրեց կուսակցութեան անդամ լինել. բոլորն էլ անխորի խոնարհվում են նրա հանձնարի, նրա գործունէութեան առջև: Պարլամենտի այն նիստը երկար անընդմէջ պիտի մնայ պատմաւորների և հանդիսականների յիշողութեան մէջ. մի չը տեսնված, յուզիչ տեսարան էր ներկայացնում պարլամենտը այդ ժամին:

Կէսօրից յետոյ է. դահլիճը խոնկած բազմութեամբ սպասում է Բալֆուրին՝ համայնքների ժողովի լիզերին, որը թէև հիւանդ, բայց և այնպէս գալիս, հասնում է: Պահպանողականների ներկայացուցիչը գուռատ, չնչնապառ նստում է բազմապի. ապա բարձրանում, մօտենում է սեղանին: Բալֆուրը մեղադրված ծայրով սկսում է նկարագրել իր մեծ օպ օն և նուրի պատկերը, թէ և օպօնեմտ, բայց բարեկամ, որին նա յարգում, սիրում էր: «Վաթսուն տարվայ ընթացքում, ասում է նա, այս երկրը երկարվեց մի շարք փոփոխութիւնների, դրեթէ յեղափոխական, ոչ գործով, փոփոխութիւն գիտական աշխարհում, փոփոխութիւն աստուածաբանական, հասարակական, փոփոխութիւն քաղաքական: Այս բոլորն Վրադստոն ի մօտոյ հետեւ է, ներանցից շատերն մասնակցել, մի քանիսի մէջ նա

զլխաւոր մաս է ունեցել, ղեկավարիչ և առաջնորդի դեր կատարել... Եթէ ես համարձակվեմ մի բան ևս աւելացնել թաղուհուն ներկայացնելիք ուղեղձին, պիտի ասեմ, որ Վրադստոն եղել է ամենամեծ ժողովի ամենամեծ անդամը, որի նմանը աշխարհ մինչև այժմ չէ տեսել... Իր ճառի վերջում Բալֆուրը առաջարկում է մի «խոնարհ ուղեղ» ներկայացնել թաղուհուն թղլուտութիւն խնդրելով, որ Վրադստոնի թաղումը հասարակական լինի և Ուիստմիստերեան ս. Պետրոս եկեղեցում մի արձան կանգնեցնվի ի յիշատակ նրա չքնաղ և փայլուն ձիւղերի և պարլամենտին ու պետութեան նուիրած նրա ջանքերի:

Բալֆուրին առաջարկած ուղեղը երկրորդում է օպօնիցիայի չէֆ Հարկորտ՝ մի սրտաշարժ, արտաստախառն ճառով: «Ո՛վ է նրան լողնեցից մոռացել նրա քաղաքահայրն ձայնը, որը այնքան հրապույր ունէր. ո՞վ կարող է մոռանալ նրա վեհ ներկայութիւնը, նրա սրամաքանութեան աղբիւրները, խանդավառ համոզումներն այն բարձր տօնը, խղճին և ճշմարտութեան ուղղած աղբիւրները...» Եւ ոչ մի մարդ չէ կարող ասել, որ այդ աստուածային ձիւղերը երբ և ինչ ծառայած լինեն ոտոր գործերի. նրանք գործարկվել են բարձր պէտքերի և վեհ նպատակների համար... Ինչ նա քարոզում է, նուրբ և ինքն էր գործարարում: Նրա կեանքը մի օրինակ էր, որ չի մոռացվի և չը պիտի մոռացվի: Նրա սիրտը միշտ անզորների, թշուառների և աղքատների հետ էր. նրանք նրան ճանաչում էին. նրանք գրեթէ նրա մարմինը և արիւնն էին: Նրա սրտի կորովի ստատիկ տենչանքը ազատութեան և խաղաղութեան համար էր. ազատութիւն ոչ միայն իր հարազատ

ցեղի, այլ իւրաքանչիւր ցեղի համար. խաղաղութիւն իւրաքանչիւր ազգի համար...»

Իրաւական պատգամաւորների կողմից խօսում է Դիլոն: «Որպէս մի իրաւագետ, ես ըզրում եմ, որ ես մի առանձին պարտք ունեմ վճարելու մեծ անգլիացուն: Իր փայլուն կեանքի վերջին և յոյժ պահնալի տարիները՝ նրա սրբը մեր ազգի համար էր և նրա ջերմ, նոյն իսկ կաթոլիկ ցանկութիւնը ծառայել Իրաւագիտին և տալ նրան ազատութիւն և խաղաղութիւն... Դժուարութիւնները և պարտութիւնը, ձերութեան տարիները յոյժամոլութիւնը անդր էին չափաւորել նրա նպատակի սահմանը, ահաբեկել նրա փայլուն քաղութիւնը... Նա սիրում էր ժողովրդին իմաստուն և յարատեւ սիրով... Եւ այն պահնալի ձայնը, որ այնչափ յաճախ շուռչ է տուել ազատութեան բարեկամներին և նրանց դէպի յաղթութիւն առաջնորդել, մինչև վերջ ծառայել է տկարներին և ճնշվածներին, ինչ ցեղի և ազգութեան էլ պատկանէին նրանք... Երբ մարդկանց մի ցեղ կամ մի ազգ հեծում էր ճնշման տակ, դէպի նրան էր ուղղվում իր հաւիսեցը և երբ էր դիմաց ճնշվածները բարձրանում էր այն ուժեղ ձայնը, Եւրօպան և քաղաքակրթված աշխարհը լուում էր և նոր յոյսերի շուռչ, թուիչ էր գալիս երկար վատութիւնից յուսահատ եղած մարդկանց կրծքերին... Եւ այդպէս Վրադստոն դառնում է անկի մեծ, քան մի անգլիացի քաղաքագետ և անցնում է մարդկութեան առաջնորդների շարքը:

«Այս դարի նշանաւոր անունը վերացվեց անգլիացիների ցանկից», այս բառերով է սկսում Սուրբերլին իր ճառը լորդերի ժողովում: Այդ ժողովի միւս երեք խօսողներից շատ խորը տըպատարութիւն է թողնում լորդ Բոքլերին իր

կերտներին, կամ ժողովրդին՝ հրաւիրելու կարգաւոր հոգով որդիների կրթութեան մասին:

«Վէրք Հայաստանին» էր, որ առաջին անգամ ընդհանուր դպրատունը ներկայացրեց իր իրաւունքները: Թէ ընտանիքների անդամներին, թէ ընկերական շրջանի զգալի մասին, թէ սիրող սրտի զեղմունքները նա արտայայտեց այնպիսի անկեղծութեամբ և մաքրութեամբ, որ միանգամից հարուած տուեց այն հին գաղափարներին, որոնք պահանջում էին զգալի մասին ինքնուրուի սէրը նկատել միայն իբրև մարդկային կենտրոն: Սիրող գաղափարի այդ ոգեւորեց նրան՝ տալով անմոռանալի էջեր «Վէրք Հայաստանին» մէջ:

Անկասկած, երկու հանդամանք մեծապէս ներգրավեցին, որ Արտիստի գրութեան խորը թափանցիկ մարդկային սրտերի մէջը և սպասարկելու անհրաժեշտ կերպով: Դա այն բանաստեղծական ոգին էր, որով համակված էր հեղինակը իր երկը գրելու և այն ամառային, դիւրամբունիկ լեզուով, որով նա արտայայտեց իր ստեղծութիւնները: Առաջին երեսից մինչև վերջինը «Վէրք Հայաստանին» մի անկրկնելի ոգեւորութիւն է, մի անընդհատ արձակ ոտանաւոր՝ գրված ժողովրդական բանահիւտութեան և ստեղծագործութեան ոգով, սրտառու ոգով:

Այդպէս է այն գրական ժառանգութիւնը, որ թողել է մեզ խաղաղութիւնը: Նա կարող է մեր ներկայի հետ անդիմապես կապով և խորին հոգեբանական ներգրգռանքով: Անշուշտ, յիշուած տարի անցնելուց յետոյ, «Վէրք Հայաստանին» չէ կարող ժառանգականութեան համար լինել կատարելապէս գրական դարձ: Բայց նա այնու ամենայնիւ միայն սպասում է և նշանակութիւն ունեցող մի գրութեան չէ մեզ համար: Ժառանգական հասարակութեան համար նա ամենագրաւոր գրական ստեղծագործութիւններից մէկն է և ցաւ պէտք է յայտնել միայն, որ «Վէրք Հայաստանին» նոր սպասարկութիւնը չէ յարմարեցրած ընդհանուր ընթերցանութեան համար: Այլ. Բաբանյան:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՈԳԵԿԱՆ ՀԻՄՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ (Նամակ Կիւմից)

Մայիսի 26-ին

Աւելորդ չէ՞ր համարում հաւելորդ հետեւել հետաքրքիր ներկայացման մասին, որ մի քանի սիրողների նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ մայիսի 25-ին, երեկոյան, այստեղի «Վերջինից» հիւանդանոցում, որտեղ ապաստանում են հոգեկան հիւանդները՝ բժշկվելու նպատակով: Ներկայացումը տրվեց բացառապէս այդ հիւանդների համար:

Դանիէլ ձակատին գեղեցիկ կերպով սարքած էր փերիկ բեմը: Սովորական ձեռք բեմի հանդէպ գրված էին մի քանի շարք արժանիքներ, որոնց վրա տեղադրվել էին հիւանդ-հանդիսականները:

սրտաշարժ ձառով: Այն բոլորին, երբ աղաւաղ-միտ հետաքրքիր վերադառնում էր իր տեղը, ժողովը ներկայացնում էր մի կատարելապէս սիրող տեսարան. շատերի աչքերը արտասուքով էին լցված. իսկ Սուրբերին՝ այդ արեւադար, յաղթանակով պետական մարդը լաց էր լինում, ինչպէս մի երեխայ:

Այդպիսի նիստեր չառ թիւ է տեսել անգլիական պարլամենտը:

Թաղուհին հաւանութիւն տուեց պարլամենտական որոշման, որը իսկոյն առաջարկվեց հանդուգնորէն ընտանիքին: Թէև նա ցանկանում էր Գլադստոնի վերջին կայանը Հովարդին գիւղը ընտրել, ուր թաղված է նրա անդրանիկ որդին, բայց գիշանելով ընդհանուր ազգի փափագին, ընդունեց պարլամենտի առաջարկութիւնը:

Գաղափար վրա թէ գիւղում, թէ Հոնդոն՝ ոչ մի ծաղիկ ոչ մի օրէն: Այդ է եղել Գլադստոնի ցանկութիւնը՝ ամենահասարակ թաղում, առանց շուքի, առանց ծաղիկների: Հերբերտ Գլադստոն իր հօր մահը յայտնելով հանդերձ, յայտարարում է նրա այդ ցանկութիւնը և խնդրում է ամբողջ հասարակութեան՝ ձգտելով նրա անուանել այդ կտակը: Ժողովի ղեկավարը: Նոյն օր հանդուգնաբար մնաց Հովարդին: Այդ եօթ օրը սգի շարք է ամբողջ ազգի համար. Անգլիայի, Տոտ-լանդիայի բոլոր անկիւնները խռով-խռով գալիս են մեծ մարդուն երկրպագելու, վերջին հրաժեշտ տալու. մի ուխտագնացութիւն էր այդ: Անկիւն, անհամար են ցաւակցողներ հեռագիրները, որ տեղում, թափվում էին երկրագնդի զանազան կողմերից...

Չորեքշաբթի երեկոյան հանգուցեալի դազաղը գիւղական եկեղեցուց փոխադրվեց երկաթուղու յատկանշալի գնացքը: Այդ բոլորէն Գլադստոնի մարմինը ազգի հեղուկութեանն էր յանձնվում:

Տեսնելով այդ դժբաղդների խաղաղ ու հանդիսական դիրքը, մարդ դժուարանում էր հաւատալ, որ դրանք յիշուած դուրի են մոտաւոր կարողութիւնից: Դրանց մէջ կային զանազան հասակի անձինք: Ահա նստած է մի արեւադար ծերունի, սրանից ոչ հեռու մի դեռահաս չքնաղ գեղեցկուհի, որի տիտուր, մեղամաղձուտ դէմքը արտայայտում էր թէ՛ չը ծաղկած սկսել է թաւա-միւ... Մի քանիսը կիսաձայն խօսակցում էին, մի քանիսը իրանց հայեացքը գցած մի ինչ որ առաջիկայ վրա՝ տխուր ու երկար նայում էին: Վարդապետը դեռ չէր բարձրացել, որ դրանցից մէկը յանկարծ սուր կանգնելով, բարձրացրեց ձեռքերը վերև և մի տեսակ բեմական ձև ընդունելով՝ գլուխ տուեց ու նստեց: Հարց ու փորձից ետեւան, որ այդ խեղճը երբեմն գերասան է եղել: Նրան դանիէլի սարք ու կարգը խեղճին յիշեցրին իր անցեալից փառաւոր «Կեցցէ»-ները և զբիւր-ները:

Այդ ժամի 8-ին վարդապետը բարձրացաւ: Բեմի վրա երկուսը էր նոյն հիւանդներից կազմված երգչիկ խումբը «Всё же паря храни» օրհներգը, զեկամարտութեամբ տիկ. Վ. Հերայի: Շատերի ցանկութեամբ մի քանի անգամ կրկնվեց: Ապա վարդապետը նորից բարձրացաւ: Խաղում էին Մօսկվեյի «Պոմպէի աւերումը» կոմի-դիան, որ իր բովանդակութեամբ յարմար էր հիւանդ հանդիսականների համար: Սիրողները բաւական լաւ էին խաղում: Սրանցից մէկը՝ պ. Ժոզանով, իր գեղեցիկ խաղով այնպիսի տպաւորութիւն էր թողնում այդ մեծած ուղեղների վրա, որ յաճախ նրանց մէջ նկատվում էին զանազան շարժումներ ու գրկմաններ: Պիետի մէջ մի կտոր արեւմտ կինոյան խաղաց այդ պարտնը, որ հիւանդ հանդիսականների մէջ երևում էր պարզ զգացմունքի արտայայտութիւն, նոյն իսկ լաց: Լացողը վերև յիշած դժբաղդ դերասանն էր... Ներկայացումից յետոյ սկսվեց դարձաւ նոյն խումբի երգչուհիները: Ապա բժ. Սմիթով կարգադրեց տաղանդները, կուպլաները, որ բաւական ծիծաղեցրեց տարբորակ հանդիսականներին: Յետոյ սկսվեց սօլօ երգչուհու-թիւն, որ նոյնպէս լաւ տպաւորութիւն էր թողնում: Անտրակտների միջոցին հիւանդ-հանդիսականները բաժանում էին քաղաքները: Մի կին, որ ամբողջ ժամանակը նստած էր բաւական հանգիստ և ոչ անքան տխուր ու մեղամաղձուտ, յանկարծ ստացած կոնֆէտներից մի քանիսը շարունակ բեմի վրա ու գոռաց բռնաւ: Նրանում էր, որ ինչդէ կինը բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում իր շուրջը, այլ միայն ուշադրութիւնը լարել էր դէպի բեմ. ինչպէս տեղեկացանք, այդ կինը ծառայելու է եղել մօտ անցնելուց այստեղի մի յայտնի ցիլիկի մէջ: Զիով պարելիս յանկարծ վայր է ընկել ու հանդիպել ազգային մի դժբաղդութեամբ:

Լուսմէնը, որ հիւանդանոցի վարչութիւնը մտադիր է այժմ շուտ շուտ առաջ այդ տեսակ ներկայացումներ, երեկոյններ և այլն: Եթէ չենք

Նա երեկոյն Հոնդոն գիւղերուց ժամի 1-ին: Նրկու օր շարունակ դազաղը գրած էր պարլամենտի Ուէստմինստերեան հօլում (մեծ դանիէլ): Դա մի կամարակալ, լայնատարած, ահագին դանիէլ է, շուրջը մի քանի անդիսական թաղաւորների արձաններ՝ միմէի դարձել: Հօլը միջով, նրա ամբողջ երկարութեամբ, յատկապէս չինել էին մի էլի-պսիտաձև տախտակաման, որի կենտրոնում մի երկաթե ձեռք խաղաղութիւնը. այդ բոլորը պատած էր սև ծածկոցով: Դազաղը գրած էր խորանարդի վրա. մի հասարակ, առանց զարդ-զարդարանքների, առանց պտակների դազաղ. մի խաչ միայն և չորս երկար մոմեր շուրջը վառած: Ահա այդ տեղ էր ննջում Գլադստոնի մարմինը: «Որչափ յաճախ, ասում է «Daily Chronicle»-ի խմբագիրները մէկը, նա իր յաղթութիւններից յետոյ գալիս էր այն նոյն տեղը, քայլում ճիշդ այն միջին գետինի վրա թիկն ոտներով և սիրով լի յայտնելով: Նա կուշի և տարել էր ընտիր ճակատմարտ և ահա նրա յաղթութիւնների այն տունը բացում է իր դռները և իր գիրկն է առնում նրան:

Նրկու օր մարմինը մնաց այդտեղ, որպէս զի ժողովուրդը միջոց ունենայ զայ վերջին «հնաւ բարեկամ» ասելու իր սիրած, իր նեղուկ և իր պաշտպան զաւակին: Հիւնդաբթի առաւօտեան ժամի 6-ին Հօլի դռները բացվեցին՝ դուրսը ժամի 5-ից սրտատրոփ սպասող ժողովրդի համար, որը գլխաւորապէս լաւ մօտեցում է հանգուցեալին, գլուխ խոնարհում և նոյնպիսի լուսնութեամբ անցնում է, դուրս գալիս Հօլի հակառակ դռներով: Այդպէս անընդհատ, առանց մի րօպէ անգամ դադարելու, գալիս և գալիս են ժողովրդի անմայր և անկրկն թղթեր: Միայն առաջին օրվայ այցելւորների թիւը հասնում է 160,000-ի, նոյնպիսի երկրորդ օրը: Նոյն հարիւրամեայ դանիէլի հի-

սխալվում, Կովկասում դեռ ևս տեղի չէ ունեցել այդ տեսակ ներկայացում:

Վ. Մանուկեան

ՆԱՄԱԿ ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒԲԱՅԻՑ

Մայիսի 26-ին

Մայիսի 24-ին, երեկոյան 5 1/2 ժամին, եկա Աստրախանի թեմակալ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան: Մինչև պօստի առաջին կայարանը սրբազանին դիմաւորելու էին գնացել կազաքի հայ երիտասարդները կառքերով և ձիերով: Ներկայումս բաւում սպասում էին սրբազանին հայոց հասարակութիւնը և քաղաքի ոստիկանապետը. ինչպէս էր պատրաստված գեներալ Ուրաշովի մօտ: Հետեւալ օրը պատարագիւր ինքը առաջնորդին էր. եկեղեցին լի էր հասարակութեամբ. ներկայ էր նոյնպէս քաղաքի ամբողջ գեներալիտետը: Նոյն օրը ծխականները ժողովեցին եկեղեցական տանը՝ սրբազանի աղբ համբուրելու և իրանց կարիքները յայտնելու: Նա խոստովանեց հասարակութեան մի քանի խնդիրներին մասին կարևոր կարգադրութիւն առնել և օրհնելով հասարակութիւնը՝ մեկնեց Յ. Յովակիմեանի տունը, ուր այդ երեկոյ սրբազան հիւրի համար ընթրիք էր պատրաստված: Մայիսի 26-ին, առաւօտեան 8 ժամին, Սեդրակեան ճանապարհվեց Պետրովսկ, որտեղից կը գնայ Աստրախան:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԽԱՆ-ԲԵՆԴԻԻՑ

Մայիսի 24-ին

Մայիսի 15-ին անձրեխախառն սաստիկ կարկուտ տեղաց Սանքենդում: Սանքենդին դրանով թէ և մի առանձին վնասի չէր յարկվեց, քանի որ չունի հացաբոյսերի դաշտեր, այնու ամենայնիւ՝ վնասվել են ծառերն ու բանջարեղէնը, որը Սանքենդու գլուխ է կազմում: Մայիսի 16-ին կարկտահար եղան՝ Սանքենդու, Բաղլաջ, Ղուրբ, Փրմբէ, Հարաւ, Ճարտար և Կալաբէ գիւղերի հացաբոյսերի մեծ տարածութիւններ: Մինչև ուշ երեկոյ՝ դիմացի սարերում սպիտակելի էր տալիս կարկուտը: Վնասը ահագին է: Գետերն էլ իրանց քաղցութիւնն են բանջարեղէնը: Շուշուց մինչև Նուրի տանող խճուղին անցնում է հինգ գետով, որոնց միայն երկուսի վրա է կամուրջ չինում, այն էլ աննշան գետերի վրա: Իսկ մնացած երեքը, այն է Սօջալու, Խաչնապետ և Փառթաւ գետերը մնում են առանց կամուրջի և գոցէ դեռ շատ տարիներ էլ կը մնան: Այդ անուշադրութեան չնորհիւ է, որ իւրաքանչիւր տարի, գետերը վարարելուց՝ անթիւ, անհամար դռներ են լինում: Մայիսի 21-ից սկսած Սօջալու գետը այն անորոշան վարարեց, որ իր ալիքից դուրս գալով՝ հեղեղեց շատ մեծ տարածութիւններ: Սօջալու գիւղի, պօստային կայարանի և Սանքենդի ուս-հասարակութեան՝ Սօջալուում ունեցած խոտա-

հարքը և բանջարանոցները, թիկնի այգիները և գետի ուղղութեամբ գտնվող հացաբոյսերը մաքրել տարել է:

Մարդկանց անց ու դարձը անհնարին է դարձել: Շուրհիւ Սանքենդում — Վարդիկալ-կաղեան գիւղի կողակներին, որոնք Սօջալուի արօտատեղերում գնդի ձիաներն են արածացնում և հրացանաձգութեան վարժութիւններ կատարում,— ոչ մի մարդկային դո՛ւ չէ գնացել: Մարդկանց ընկու դէպք շատ է պատահել, սակայն կողակները բաջարաւ կուշիով գետի սրին-թաց ալիքների հետ, խլում են մարդկային դո-հերը և ազատում մահից: Նոյն կողակների չնորհիւ են ազատվել Շուշու պօստը, որը երկար տարածութեան տեղ գետը տարել է՝ ձիերը սայալի հետ միասին, և Շուշու Ղազանիցեց եկեղեցու միաբան՝ Յ. քահ. Վարդապետեանց իր մի ընկերոջ հետ: Ամեն օր նորանոր լուրեր են ստացվում գետի հեղեղումներից: Աւելի վար-հուրելի լուրեր, կարծում ենք, կը ստացվեն վաղը, որովհետև այսօր էլ տեսնված սաստիկութեամբ կարկտախառն անձրև տեղաց: Քսան րօպէի ընթացքում Սանքենդի փողոցներում անանցանելի դեռնել էին կազմվել: Շատ տներ և ներքնասանք ջրով լցվել էին: Հեղեղը խլում տա-նում էր, ինչ որ գտնում էր: Ջրի երեսին լու-ղում էին զանազան փայտեղէն իրեր: Խառնա-չփոթութիւնը ընդհանուր էր: Այդպիսի հեղեղ Սանքենդում երբէք տեսնված չէ: Երեկոյան դէմ լուր ստացվեց, որ Կարկաժան գիւղի հա-ցաբոյսերը կարկուտ աննշան փչացրել է: Կարկաժանցիները դրանով ենթարկվում են ա-մենաթշուառ աղքատութեան: Նրեակայել պէտք է երեք տարի շարունակ կարկտահարութեան ենթարկվող գիւղի դուրսիւնը: Ներկայ տարվայ ձմեռվայ սաստիկութիւնը և անցեալ տարիների կարկուտի հարուածները՝ թշուառ փողոցներ-րին առանց այն էլ մեծամեծ պարտքերի տակ էին գցել: Այսօրվայ կարկաժից յետոյ այդ գիւղը հազիւ թէ կարողանայ իր դուրսիւնը պահա-նել: Կարկուտը չէ բաւականացել միայն արտե-րը փչանելով, այլ ձորերը հեղեղելով՝ ընկ տարել է նաև ընտանի անասուններ: Լուր ստացվեց, որ Ջան-Հասան գիւղի արտերն էլ փչացրել է կարկուտը: Առհասարակ Ղարաբաղի սարեցիները դեռ շատ տարիներ կը յիշեն ներկայ մայիսի անցթիւնը ու հասցրած չարիքները, եթէ ա-պագայում դրանից աւելի վատերը չը տեսնեն:

Ի. Գ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԻՑ

Մայիսի 25-ին

Նոր-Նախիջևանի «Բարեգործական ընկերու-թիւնը», նախկին տարիների սովորութեան հա-մաձայն, այս տարի էլ իր տարեկարծը կատա-րեց ս. Խաչ վանքում հացիկոցիով և հանդուցեալ անդամների յիշատակին հոգեհանգստով: Առաջ, հացիկոցից յետոյ, լինում էր նաև ընդհանուր ժողով և հաշուետւթիւն, որն այս տարի չեղաւ:

Ժամը 9-ն է. պատգամաւորները արդէն հա-ւաքվում են, վերջին եկողներին թուում է և անդ-լիական թագաժառանգը իր որդու հետ միասին, հասարակ կառքով, մի ոստիկան միայն կառքի առջև: Ժամը մօտ 11-ին Հօլի դռները բացվում են և սկսվում է հանդիսաւոր գնացքը: Առաջից գալիս են համայնքների ժողովի անդամները, մի րօպէ ընդմիջումից յետոյ լօրդերը, ապա աղաղ-գի պատգամաւորները և այլն: Թագուհու ներ-կայացուցիչներից յետոյ՝ տոնում են դազաղը, որի երեքըւր կրում էին տաւը հոգի, որոնց մէջ յիշեք՝ Ուէլսի իշխանը, իր որդին, լօրդ Բոգըրին, Հարիօթ, լօրդ Կիմբլէյ, լօրդ Սուրբի, Բալ-ֆուր: Դազաղից անմիջապէս յետոյ գալիս են հանգուցեալի ընտանիքը, ապա Հովարդէնի բաղ-մաթիւ գիւղացի ներկայացուցիչները:

Թագումը հասարակ, պարզ, բայց սրտաշարժ էր և յուզիչ:

Ո՛ր մահկանացուն է իր հետ գերեզման տա-րել այսչափ օրհնութիւններ, տաճեակ միլիոն-ներին բաղկացած ազգերի խոցված սրտերից ըլկած ցաւակցական համակրանք և օրհնանք...

Ալսօ

ժողոված լինելով յանձնարարին: Ընկերութիւնն ունի 60,000 բուրգայ աւելի գրամապարտ սակայն, մանաւանդ մինչև վերջին տարիները, գործունէութեան շատ էլ մեծ ջանքեր չէ ցոյց տուել, ճիշդ այնպէս, ինչպէս այդտեղի ընկերութիւնները: Գործունէութիւնը մինչև 90-ականի սկիզբները: Ուրախաբար է նկատուել, որ կամայ կամաց Նոր-Նախիջևանի հասարակական հիմնարկութիւնները ղեկավարութիւնն անցնում է եռամսհոտ և գործունէայ մարդկանց ձեռքը: Բարեգործական ընկերութեան խորհրդի նախագահն է «Մշակի» ընկերացոյններն ծանօթ պ. Գր. Չախուշեան: Ընկերութեան հոգացողութեան ամենամեծ աւարական եղել է ս. Խաչի վանական երկրատեսան զարդը, որին տարեկան 1,200 ռ. նպատակ էր տալիս: Այժմ այդ զարդը փակուել է: Լաւ կը լինէր, եթէ ընկերութեան եկամուտները այստեստե խնայվելը այդ գումարը արվել իբր նպատակ նոր զարդու սովորող աշակերտներին, որ կարողանան իրանց ուսումը շարունակել ինտական դպրանոցում:

Նոր-Նախիջևանի և Բնասարաբայի թեմական դպրանոցը, որ կառավարվում է կայսերանատու կանոնադրութեամբ, մինչև այժմ չունէր տեսչի օգնական: Կանոնադրութեան հիման վրա, Գեորգ կաթողիկոսի տուած բացատրական կանոնադրութիւնը (յօդուած 17 բ. պրակ.) տեսչի օգնականը առաջարկվում է մանկավարժական ժողովից և հաստատուել հոգաբարձութիւնից: Այս տարի հոգաբարձութիւնը որոշում է տեսչի օգնական ունենալ, ուստի տեսչի միջոցով առաջարկում է մանկավարժական ժողովին ընտրել արժանաւոր մէկին այդ պաշտօնի համար: Մանկավարժական ժողովը մայիսի 23-ի նիստում ընտրեց իր միջից Վահան Քերեմալին տեսչի օգնական, համարելով նրան արժանի այդ պաշտօնի համար: Վահան Քերեմալն երկուստարդ մարդ է, համեստ, փորձված (ուժի պարտի), որ Հախիւսի մանկ դպրոցի տեսուչ է, կատարելով իր պաշտօնը ճիշտ և օրինակելի կերպով, այնպէս որ տեսուչ Չարեքեան այտուհետե կունենայ արժանաւոր օգնական: Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 31-ին, կիրակի օր, «Մշակի» խմբագրութեան նախաձեռնութեամբ, Վանքի մայրեկեղեցում հոգեհանգիստ կատարվեց մեր տաղանդաւոր ժողովրդական գրող Խաչատուր Աբովյանի մահվան 50-ամեակի առիթով: Վանքի տաճարում և բազի մէջ խմբված էր այնպիսի մեծ բազմութիւն, որի նմանը չառ քիչ է պատահում տեսնել: Մեծամասնութիւնը ինտելիգենտ հասարակութիւն էր, որ եկել էր իր յարգանքը ցոյց տալու: Վէճքը Հայաստանի հեղինակ յիշատակին: Բազմութեան մէջ մինչը նկատուեց մեր զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներին, մեր գրողները շատերին, բարձրաթիւ ուսանողներ և ահագին բազմութիւն տակիկեցում հայտնիներ: Հասարակութիւնը մեծ գոհութեամբ լսեց մեր շնորհալի երգիչ Բ. Ավրիւմանին, որը սիրով մասնակցում էր եկեղեցական երգեցողութեան, Ներսիսեան դպրոցի երգիչի խմբի հետ միասին: Ուրախութեամբ պէտք է յիշատակենք, որ Թիֆլիսի քահանայեպիսկոպոս Սուրբենանց, յարգելով Աբովյանի յիշատակը, առանց յատուկ հրաւերի, ինքնաբերաբար ներկայ էր հոգեհանգիստին: Հոգեհանգիստի կարգը կատարվեց բազի մէջ, բացօդայն, որովհետե եկեղեցու մէջ ժողովուրդը չէր կարող տեղադրուել: Եկեղեցական արարողութեան զբաղումն անցաւ մեր թիմի առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոս Սուրբենանց: Հոգեհանգիստի վերջում պ. Ալեքսանդր Քալանթար ձառ խօսեց, ցոյց տալով թէ ինչի մէջ է կայանում Աբովյանի նշանակութիւնը հասարակութեան ու հայոց գրականութեան համար: Հանդէսը վերջացաւ ժամը 1-ին:

Թիֆլիսի քաղաքային Կրեդիտային ընկերութիւնը իր ընդհանուր ժողովի նիստին, որ տեղի ունեցաւ կիրակի, մայիսի 31-ին, որոշեց 1) խնդրաւորաբար լինել բաց թողնելու նոր օրվա-ցիւններ 4 1/2 տոկոսով և 2) նշանակել 2,000 բուրգի փող անբերրութիւնից վնասված գիւղացիներին օգնելու նպատակով:

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը յայտնել էր ձիաքաշ երկաթուղու վարչութեան, որ քաղաքը մտադիր է իր ձեռքը առնել ձիաքաշը: Այս օրերս ձիաքաշի վարչութիւնը ուղարկել է քաղաքային վարչութեան նոր առաջարկութիւն, որով յանձն է առնում մտցնել երկաթուղային շարժիչներ, տալ քաղաքին իւրաքանչիւր տարի առնուաբը 30,000

բուրգի հարկ և թոյլ տալ քաղաքին տասը տարուց յետոյ, եթէ ցանկանայ, յետ դնել ձիաքաշի ամբողջ գինը իր բոլոր պարտքներով: Զիաքաշի վարչութիւնը առաջարկում է պայման կապել 32 տարով, որից յետոյ երկաթուղին իր բոլոր գույքերով դառնում է քաղաքի սեփականութիւն:

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան անդամ պ. Յովհաննէս Սպինդարեան հրաժարվել է հոգաբարձական պաշտօնից:

Մայիսի 26-ին, ուսուցչ հռչակաւոր կրիտիկոս Բէլինսկու մահվան 50-ամեայ տարեդարձի օրը, վերջացաւ այն իրաւունքը, որ նրա ժառանգները ունէին նրա դրական աշխատանքների վրա: Այդ օրից Բէլինսկու գրածագները դարձան արդէն հասարակական սեփականութիւն, որից ամեն մարդ կարող է օգտվել: Ի դէպ. հասարակական սեփականութիւն դարձան և Խաչատուր Աբովյանի երկաթուղիները, քանի որ ապրիլի 26-ին, նրա անհետացման կամ մահվան յիշատակաւ տարեդարձի օրը, վերջացան նրա ժառանգների իրաւունքները, օրէնքի համաձայն:

ՄՕՍԿՎԱՍԻՑԻ մի մասնաւոր նամակով գրում են. «Այն 10,000 բուրգու մասին, որ Ա. Պոլոսեան նուիրել է «Հրատարակչական ընկերութեան», առ այժմ կարող ենք հաղորդել հետեւեալը.—5,000 բուրգի յատկացվում է դուռ մահ կապան և ժողովրդական գրքերի հրատարակութեան գործին, գործարկելով տարեկան 1,500—2,000 բուրգի, միաժամանակ աւելացնելով գումարի վրա իւրաքանչիւր տարվայ հրատարակած գրքերից դրացած գումարը. իսկ մնացած 5,000 բուրգին, որպէս անձեռնմխելի գումար, պիտի շահեցնվի և դրանից ստացվող տոկոսներով, իբրեւ մրցանակ, պիտի վարձատրվի մի որ և է արժանաւոր գրողները՝ ընկերութեան հայեցողութեամբ: Աւելի մանրամասն ծրարվել և նուիրված գումարը շուտով կուղարկվի ընկերութեան:

ՔԱՐՎԱՆԱՐԱՍԻՑԻ մեզ գրում են. «Մայիսի 29-ին, ժամը 2-ին, այնպիսի հեղեղ եկաւ մեր և Վերին-Սաղաի գիւղերում, որի նմանը ձերու նիւները չեն յիշում: Գետերը սարսափելի վարարեցին. շատ տներ կախեցին և խարխուղեցին: Բանիւնը լինում էր զանազան զանգերով. մարդկային զանգ չեղան: Ղազարի շրջակայքում հեղեղը 4 երեխայ է քշել: Ամբողջ մայիս ամիսն էլ անձրեւային էր, ապրիլի նման, որը բաւական վնասեց արտերին:

ՇՈՒՇՈՒ քաղաքային ընտրութեան մասին մեզ հաղորդված է հետեւեալ սրամիտ նկատուութիւնը. «Շուշուի անդրադի մնացած» տարրերովում է: Պաշտօնավոր գնդապետ Քալանթարովի իր մանկավարժական անաշուղ գործունէութիւնից յետոյ, նորակալ անաշուղ քաղաքագլուխ հանդիսացաւ: Շուշու գուման երկար մտածելուց յետոյ քաղաքագլուխ ընտրեց Գ. Միլիք-Շահապալեանին, Շուշու գաւառի պետական կալուածքների ազնւոյն: Նահանգական ատենադ նրա ընտրութիւնը ապօրին համարեց և չը հաստատեց: Այժմ, շուշուները, ինչպէս ասում են՝ քունջ ու պուճախ են ընկել քաղաքագլուխ որոնելու: Եւ վերջում, Թիֆլիսի մի փողոցում, երկաթուղիական փողոցում ապրող մի ձերմուկ պաշտօնավոր փութ-ինգապետ են գտել: Կարապետ բէկ Դանիելով և ուրախացած՝ նրան են առաջարկում Վարաբալի մարաքաղաքի լոբի-մէրի պաշտօնը, բայց... խեղճ շուշուները, Կարապետ բէկն ևս մերժում է նրանք... Մնում է, որ շուշուները մի պատգամաւոր ուղարկեն Ասխաբադ, ուր շուշուի պաշտօնավոր ձեր շտաբականներ են մայրերը շատ կան: Գուշ նրանցից մէկը խղճայ և յանձն առնի քաղաքագլուխ լինելու...»

ԱՆԷՔԱՆՆՈՐՈՊՈՒԿ գաւառից մեզ հաղորդում են. «Արտերը կանաչել են արդ, ցանքը խիտ է. տեղ-տեղ բուսականութիւնը չէ զարգացել: Գարնան ցրտերը պատճառով: Այժմ ամեն բան կախված է անձրեւներից. եթէ ջրի առատութիւն չլինի, հունձը շատ անշուղ կը լինի»:

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ուսուցչ հեռագրական գործակալութիւնը» Մարդիկից հաղորդեց, որ սպանիական շատ նաւեր, որոնք ամերիկական կէտքին են հասցնում Սպանիա, սրբանից յետոյ կէտքին կը բերին Ռուսաստանից, և մի քանի խոշոր շոգենաւեր արդէն Բաթում ուղևորվեցին: Եւ յիշուի, այս օրերս այստեղ հասան երկու սպանիական շոգենաւեր՝ «Cadacua» և «Ciudad de Reus» կէտքին տանելու: Շոգենաւերը կէտքին ընդունում են Բոտիլից և

Նօթելից: Ամեն մէկ շոգենաւեր կը վերցնի մօտաւորապէս 150—160 հազար պուղ կէտքին:

ՄԵԼԻՍՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Հոգեհալտեան կիրակի օրը, պատարագից յետոյ, Սրապիճի քահանայ, հանգուցեալ Կարգատօնի մահվան առիթով, հոգեհանգիստ կատարեց, ծանոթացնելով ժողովրդին մեծ ձերմուռ անձնատարութեան և գործունէութեան հետ: Այդ օրվայ քաղաքի նիւթը ընտրած լինելով, տօնի յարմարութեամբ, առաքեալները՝ տէր-հայրը համեմատեց Կարգատօնին այդ վերջինների հետ և աշուտանց նրա գործունէութիւնը սիրոյ առաքելով իւր: Քարողը շատ լաւ տղաւորութիւն թողեց: Բայց ավուստ որ եկեղեցում ընդամենը 20—30 աղօթողներ կային: Սկզբիցուց ժողովուրդը դնաց ուսումնարանի ներկայ լինելու տարեկան հանդէսին: Հայր տեսչի հաշիւից երեւոյ, որ ուսումնարանը այս տարի ունեցել է 14 սան երկու սեռից. Գ. բաժանմունքը աւարտում են 3 աշակերտութիւններ: Բոլորն էլ պիտի շարունակեն իրանց ուսումը օրիորդաց դիմնագիտման:

ՍՂԱՍԻՑԻ մեզ գրում են. «Երկու շաբաթից աւելի է, որ այստեղ ամեն օր կարկառաւոր անձրեւ է գարի և հեղեղներ են լինում: Մայիսի 28-ին այնպիսի հեղեղ կար այստեղ, որ ճանապարհը անանցանելի էր ամբողջ մի ժամ: Գաւառում նորայիսի հեղեղ և կարկառու է գալիս: Մայիսի 26-ին, Ալեքսանդրովա գիւղից սկսած մինչև Յարսի-Կոլոզի մասին տեղ մեծ կարկառու եկաւ: Յարսի-Կոլոզից ամբողջ օրն այնպիսի հեղեղ էր, որ ջրի առատութիւնից խեղդվեցին երկու մարդիկ: Կարկառուն այնպէս մեծ էր, որ նրա մի հարկածից տեղի ու տեղը մեծաւ 13 տարեկան մի երեխայ: Հեղեղներ և կարկառու գալիս վնասներ են տալիս մեր գաւառակի անուստութեան:

ԳԵՐԻՆԵՏԻՑ մեզ գրում են. «Այս տարվայ թանգութեան հետեւեալը այն եղաւ, որ քաղաքում օրէցօր զարգանում է մանր գողութիւնը. գիշեր չի պատահի, որ մի քան չը թոցնին գիշերաշրջիկները: Բանն այն տեղն է հասել, որ մինչև անդամ լուսամուտի շրջանակներն են տանում և այդ բանը կատարվում է մեծ հրապարակի վրա, ոտով կանախանից հալու մի 100 բալլ հեռու»:

ՄԱՐԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏԻՍՏԱՐ

Սանտ-Նագօի մօտ եղած պատերազմի մասին հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւնները: Կուի ծրարից բաւական բարդ էր: Մովսէսեան Մելի նախ և առաջ ուղեց իմանալ թէ նաւահանգիստի անկերում կան արեւօք ծածկված մարտկոցներ և արեւօք նաւահանգիստում են գտնվում այն իսկ սպանիական նաւերը, որոնք որոնում էին ամերիկացիները: Մրադի այդ մասը ի կատար անցրեց փայլուն կերպով: Վիշեր էր: «Morb-lehead» մարտանաւը բաժանվեց ամերիկական նաւատորմից, և օգուտը բաղեցրել միտնութիւնից, մտաւ նաւահանգիստը հետախուզութիւններ կատարելու համար: Չորս ժամից յետոյ նա վերադարձաւ և յայտնեց, որ տեսել է սպանիական 6 նաւ: Նաւատորմը մօտեցաւ նաւահանգիստի մուտքին, այդ ժամանակ սպանիական մարտկոցներից կրակ սկսեցին նրա դէմ և այդպիսով կատարված էր և ծրարի երկրորդ մասը, այն է յայտնի դարձաւ թէ կան և ծածկված մարտկոցներ: Մելի լինել էլ սկսեց ուժեղանալ: Կրակը ուղղված էր Մօրթո և այլ մարտկոցներ դէմ, որոնք տեղադրված են ընդհանրի վրա: Ամերիկական փոքրիկ մարտանաւերը մօտեցան ափին և սկսեցին կրակ թափել ափի մօտ գտնված բառաբէնների վրա: Մօրթո մարտկոցը և ուրիշները տատակ վնասվեցին: Ամերիկական նաւերից երեւում էր թէ ինչպէս սպանիական զինուորները փայլուն էին այդ մարտկոցներից, օդի մէջ թռչում էին քարեր և բարձրանում էին փոշու ահալին ամպեր: Այդ սկզբնական փորձերը ցոյց տուին ամերիկացիներին, որ Սանտ-Նագօն շատ լաւ ամրացած մի տեղ է և նրան դրաւից հեշտ բան չէ: Ուստի ամերիկացիները վճռել են պաշարել Սանտ-Նագօն ծովի կողմից, զօրք իջեցնել ափը և պաշարել նրան նաւ ցամաքի կողմից ու այդպիսով հարկադրել ծովապետ Սերվերային անձնատուր լինել: Մովի կողմից պաշարումը սաստկացնելու համար ամերիկացիները «Մէր-րիմաք» անունով հին նաւը ջրատուր արին նաւահանգիստի մուտքում, որպէս իր այդպիսով փակեց ճանապարհը: Այս դէպքը սպանիացիները յաղթութիւն են համարում, մինչդեռ Ամերիկա-

յում, ինչպէս հաղորդում է հեռագիրը, օրվայ հերոս է Հօլսոն անունով օֆիցերը, որ ջրատուր արաւ: «Մէրրիմաք»: Լրագիրները ի պատիւ նրա տուում են հիացման զօղեստներ և մինչև անգամ նրան ազգայնա նախագահ են համարում: Պատերազմը ձգձգվում է, իսկ Սպանիան օր օր վրա ցոյց է տալիս, որ ինքը անընդունակ է շարունակել կռիւը: Մեծ յոյս ունեն Սերվերայի վրա և ահա նա փակված է Սանտ-Նագօի նաւահանգիստում: Մեծ մեծ խօսում են երկրորդ նաւատորմի մասին, որ պատրաստուում է Կալիֆօռնիա և օրպէս թէ պիտի գնայ Սերվերային օգնելու: Բայց լրագիրները շատ յուսահատական տեղեկութիւններ են տալիս այդ նաւատորմի մասին. դա մի թոյլ, խեղճ բան է. նաւերի մեծ մասը հին, անպատրաստ, վատ զինված: Սպանիական կառավարութեան անհոգութիւնը գնալով աւելի և աւելի պարզվում է: Նւ. որիչ կերպ էլ չէ կարող լինել մի պետութիւն, որ ապքատ է, սպառված երկարատե պատերազմներից և յետագիտական ուղղութիւնից:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ Բօստօն, մայիսի 22-ին

Մեռաւ նշանաւոր ամերիկացի վիպասան Է. Գուարդ Բէլլամի, որու անունը ծանօթ է ովկիանոսի երկու կողմն ալ, իբրեւ տնտեսական և ընկերական շարքերու վրա գործ արմատական միպագիր: Հեղինակին նշանաւոր գործն է «Էլպի հոտ նայիլը», որով նա պատկերացողացած է իր տընտեսական-ընկերական տեսութիւնները: Այդ վէպը իր ժամանակին մեծ աղմուկ հանեց, հրաւիրելով չափազանց գովաստներ, ինչպէս նաեւ ամենէն խիտ քննադատութիւններ: Հեղինակը, սակայն, անմիտ իր արհեստակցիներուն մեծամասնութեան, չուղեց օգտիլ իր յանկարծական համբաւէն. կրնար մի քանի ամիսան միջոցին երկրորդ հեղինակութիւն մը հանել և այդպէս շինել իր բաղդը: Կերել թէ Բէլլամին իր քաղաքում ընկերակցութիւնէն քիչ օր մը ունէր իր սրտին մէջ, դրամի, ստացուածքի այնքան սիրահար չէր. նա բաղդը շինելէ աւելի աշխատեցաւ աշխարհի, ընկերութեան օգտին աշխատել: Այդ թեմականէն առանձնապաւ հեղինակը և իր մտքի բոլոր ոյժերը ամբողջութեամբ «Հասարակութեան» անուն մէջը դրեաւ: Մի քանի տարվան չարաչար աշխատութիւնը վնասեց գրագէտին առողջութեանը: Այդ խանդավարած առողջութիւնը դարձանելու շատ աշխատեցան իր բարեկամները, սակայն իրօր: Բէլլամին ալ գնաց, որիչ մարտիրոս մը իր գաղափարներուն: Պատերազմով այնքան դժգոյս է հասարակութիւնը, որ լրագիրները անցողակի կերպով միայն յիշեցին համակերկ գրագէտին մահը:

Անդրից մեծ ձերմուռնի մահը սակայն մեծ սուգ պատճառեց հաւ. ամեն կողմ ջերմ յարգանքով մը խօսեցան նշանաւոր անողկացուն վրա, որ կերել թէ Անդրիայէն դուրս ուրիշ հայրենիք մ'ալ ունէր: Մեծ բան է մէկէ աւելի ազգերու մէջ այսքան մեծ ակնածանք ընդունել: Ամերիկեան մամուլը միաձայն ցաւակցութիւն յայտնեց այդ կորուստին համար: Կըտու թէ այդ համակրութեան մեծ մասը յառա՛ւ կուգայ տա պատճառէն, որ Անդրիայի և Ամերիկայի մէջտեղ դաշնակցութիւն մը կընուելու վրա է, բարեկամութեան զղացումը երկուսեան շատ օգուտըր է. սակայն Կարգատօնի մահվան առթիւ յայտնված ամերիկեան ցաւակցութիւնը քաղաքական պատճառներու արդիւնք միայն համարել չէ կարելի: Շատ աւելի մօտ պիտի լինէր ծըշ մարտութեան լսել, թէ Անդրիայ և Ամերիկայի ներկայ բարեկամական յարաբերութիւններն աւելի մօտեցան այդ անկեղծ համակրութեան պատճառով: Իր ամենէն մեծ գործը չը պիտի համարէր արեւօք մեծ ձերմուռնի, եթէ կրնար իր մահով անդիլխիտս աշխարհի միջև եթէ ոչ դաշնակցութիւն, գոնէ մշտնջենական, հայտարար խաղաղութեան ատեն մը հաստատուի:

Ամերիկայի հայերը, ուր որ կրնային, իրենց ցաւակցութիւնը յայտնեցին թրքահայոց համակիր ձերմուռնի մահվան համար: Ուստը և ուրիշ քաղաքներ հոգեհանգիստեան պաշտօն կատարեցին: Բոստօն այդ կրօնական պատիւը չըրաւ: Արեւելի բրիտանիէից բարեկամին: Շարաթներ առաջ «Հայ բարեխորաց ընկերութեան» մէկ ժողովը, աղքատ գործատուներէ դրամ հանգանակելով, հեռագիր մը դարկին ուղղվեթ մաղթելու մեր բարեկամին. երկրորդ հեռագիր մ'ալ երկինք զրկվեց Սատուից... խնդրելով որ պատրաստ լինի հայոց կողմէն վարձատրել «մեծ մարդասպանին» թշնամին. այս վերջին հեռագրին ծախսը հոգացին քաղաքիս հարուստ վաճառականները:

Արմէն

